

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

517 ՏԱՐԻ, ԹԻՒ 5

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

2 ՓԵՏՐՎԱՐ 1902

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ . . . . .	Գ. 20ՀՐԱՊ
ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ. Տանիքից աղջիկը . . . . .	ԹԼԿԱՏԻՆՅԻՆ
ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. Ճարոնի մեջ . . . . .	ՄԴԵԼԼԱ
ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ . . . . .	ՄԵՆՍՍԵՐ
ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ (Բանաստեղծություն) . . . . .	Վ. ՄԱԼԷՉԵԱՆ
ՀԱՆՃԱՐ ԵՒ ՏԱՂԱՆԴ (Թարգմ. Ե. Գ.) . . . . .	ՄԱՔՍ ԼՕՐՏԱՌԻ
ՅՈՒՇԱՏԵՏՐ. — ՆԱՄԱԿՍՏՈՒՓ . . . . .	

*Մասիս* շաբաթաթերթի արեւիկան բաժանորդագրին Ե. Գ. Պոլսոյ համար ԲԱՌՍՈՒՆ զր. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ զր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանկ կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը խաբարութեան վրայ է: Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: *Մասիս* հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխափանաւորներուն ու Պանչե-Գարուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղարաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԵՒ

ՀԱՍՑԷ

دوعليده غلطهده «ماسيس» غزتهسى ادارهسى

ԵՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղաշաթիս, Կոնստանկեանի խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople




# ՌՕՍԻԱ — ROSSIA

ԱՊՈՂՈՎԱԳՐՈՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ	34,775,642 Փրանք
Երաշխաւորութեան գումար	121,765 333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »
Կեդրոնատեղի, Ղալաթիոյ ֆարափին վրայ, Մախասան հին տեղ	
Ընդհ. Քննիչ	Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՒՐՈՒԻՉ	ՔԼՈՏՈՐ ՌԷԲԵԼՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

## ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ գիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեխանիկներ կը գտնուին:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼՍԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.  
 } 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Գիմաց.

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.  
 } 2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւիաւորութիւն

Մասնանիւղեր գաւառաց բոլոր ֆազաններուն մէջ

ՇԱՐԼՈՒՎԱՆ  
 ՄԱՍԿՈՎԱ  
 ՎԱՍԻԼՅԱՆ  
 ՎԱՍԻԼՅԱՆ  
 ՎԱՍԻԼՅԱՆ



# ՄԱՍԻՆ

## Յ Ի Ս ՈՒ Ն Տ Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ

Ճիշդ այսօրուան պէս շարաթ օր մըն էր, 1852ի փետրվար ամսուն առաջին շարաթը, երբոր Մասիսը, Կ. Պոլսոյ առաջին կանոնաւոր հայ լրագիրը, լոյս տեսաւ. լոյս մը՝ որ մութէն շատ ասարեք ըլլալու չէր այն խանի անկիւնին մէջ ուր այս օրաթերթը հրատարակուել կը սկսէր:

Ձեռնարկը նորօրինակ էր:

Ղազեքաճիտքիւնը այն ատեն արհեստ մը չէր եւ իբրեւ ապրելու միջոց՝ երկրացիլէն ալ պակաս բան մը կը նշանակէր:

Խնչպէս եղաւ որ Կարապետ Իւթիւճեան, խոհեմ ու շրջահայտաց մէկը, այս բազմախնդրութեան մէջ նետուեցաւ:

Հարկաւ ազգին ան ատենի երեւելիները իր կողմն էին եւ անոնց դբդմամբը այս ասպարէզը ընդգրկած էր ան. սովորութիւն էր այն ատեն — եւ հիմակ ալ ինչո՞ւ չըլլար — որ երիտասարդները՝ իրենց մեծերուն, տարիքոտներուն խօսքովը ասպարէզ մը սրոյէին իրենց. եւ զարմանալի բան, 1852ի աղաները փափագեր էին որ Կարապետ Իւթիւճեան ղազեքաճի ըլլայ:

Պատիկ գայթակղութիւն մըն էր ասիկայ ոչ միայն հասարակութեան համար՝ այլ Իւթիւճեանի ընտանիքին մէջ ու անոր շուրջը: Այս մտրդէն՝ որ ամէն գիտցածը ու լսածը, ամէն անցածը ու գործածը կը պատմէր կ'իմացնէր իսկոյն ամէնաւն իր ղազեքայոյլը, զգուշանալու էր: Ու իր ստք կոխած ստանը մէջ խօսակցութիւնները կ'ընդհատուէին վախցուելով որ հոն ըսուածները միւս օրուան

թերթին մէջ չի հրատարակուին, իրենց տնունին յիշատակութեամբը, ինչ որ լրումը պիտի ըլլար ամօթի. միամիտ ու անմեղ խոհեմութիւն՝ հիմակուան սովորութեան քով որ ամէն անգ խմբագրին ներկայութեան անձուկը ունի, ամենէն մտերմական բաները հրապարակուած ատենելու համար:

Հետաքրքրութիւնը եւ շարութեան պղզտիկ որդը, որ ամէն մարտու հոգւոյն մէջն է, այս օրագրին ընթերցումը կ'ապահովէին:

Կարդալ գիտցողները խիստ փոքրիկ թիւ մը կը կազմէին. բայց կարդացողները, ապահովապէս, կը հասկնային կարդացածին. հիմայ կարդալ գիտցողներուն թիւը շատցած է անտարակոյս, բայց կարդացածին հասկընալ գիտցողներուն թիւը նոյնքան նուազած կրնանք սեպել. խօսարկակ համեմատութիւն, որ խորհրդածութեան արժանի նիւթ մըն է կարծեմ:

Այն ատեն նորութիւնները կը սիրուէին:

Հասարակութիւններն ալ անհասանելու պէս են. տարիքի շրջաններ ունին ուր հասնելուն կանգ կ'առնեն. տեսակ մը կայքեր, բացաւայրեր են ասոնք ուրկէ ալին կարելի է երթալ ինչպէս ճախին, եւ ուր քիչ մը կը մտածեն, շուրջերնին կը գիտն կարծես, դէպի այս կամ այն կողմը շտկուելէ առաջ:

Հայ հասարակութիւնը այդ միջոցին քիչ մը վարանելէ ետքը հաստատ մտադրութեամբ մը նետուել կուզէր Եւրոպայի մտաւորական զարգացման ճամբուն մէջ. ասիկայ քիչ մը կանխահաս էր մեզի համար, վասն զի յայտնի

վտանգ մը կար որ անոր լուրջ աշխատութիւններուն հետեւելէ աւելի՝ արտաքին կարգ ու սարքովը ու վայելչութիւնովը միայն հրապարուէինք :

Սերվիչէններ, Օտեաններ, Ռուսինեաններ, Զօրայեաններ, Իւթիւճեաններ Եւրոպայի գրականութենէն շրջացած կը դառնային հոս, այն ատենուան մեր գրչի արտադրութեանց հանդէպ՝ ինքզինքնին գտնելով՝ երկարական լոյսով լուսաւորուած քաղքի մը վարժութիւնը ստացող մարդոց գիրքին մէջ որոնք յանկարծ ուսմիկ քեթռօլին կամ նոյն իսկ պատրոյգով վառուած ճրագի մը լոյսովը գտհանալու կը պարտաւորուին :

Առաջին ըլլուելիքը Պոլսոյ հայ հասարակութեան համար՝ լրագրութիւն մը հաստատելն էր : Հին օրէն մնացած ամիրայ կամ Բարիզէն նոր վերագարձող երիտասարդ, ծերունի եկեղեցական կամ նոր դասախօսելու կոչուած վարժապետ, ամենքը համաձայն գտնուեցան այս կէտին վրայ, ու Մաւիսը երեւեցաւ :

\* \* \*

Ըսի որ Պատրիարքարանի աղաները պաշտպան կեցան իրեն առջի օրէն եւ Մաւիսը անոնց բերանը մնաց մինչեւ վերջը . ազնուականութեան թիթեւ հով մը փչեց միշտ այս թերթին մէջ . անոր գաղափարները, լեզուն ու քաղուածքը գոհիկէն զգուշացան, բան մը զոր նախատինքի մը պէս անոր երեսին նետեցին ատեն մը :

Վերջէն երբոր օրագիրները շատցան մեր մէջ, իր ուրոյնութիւնը եզաւ հանրային խնդիրներու առթիւ կամ գրականութեան մասին ամբօթին մէջ բէշերը վեր ժողված մարդու կեցուածքը առնել : Նեղացան իրեն դէմ եւ նախանձեցան իր վրայ : Սովէն համեմատութիւն պահելով կրնանք ըսել որ մեր Journal des Débatsն եղաւ Մաւիսը շատ մը տարիներ :

Տարիքնին առած, լուրջ ու զիրքի տէր մարդիկ կան որոնք օրին մէկը մետաքսէ գուլպայի մէջ պարուրուած գեղեցիկ սրունդ մը կամ հոլանի լանջը մը զիտելու մարմաջէն կը բռնուին՝ ու, հանրային պարարանը

չի համարձակելով մտնել, բարենպասակ հաստատութեանց համար արուած պարահանդէս մը կերթան կամացուկ մը, պզտիկ դիմակ մը անյուշացած երեսնին, համոզուած՝ որ հոն երթալնուոն լսուիլն ալ չի կրնար իրենց պըզտիկութիւն մը սեպուիլ կամ դայթակղութիւն մը դառնալ :

Ասոր պէս ալ, պատահեցաւ որ պետական պաշտօնեաներ կամ ալեւոր Սրբազաններ հրապարակագրութեան ակտէն վարակուած՝ ատեն ատեն ծածկանուոյով մը երեւային Մաւիսին մէջ, հանրային վէճերուն խառնուելու համար :

Ժողովրդական չեղաւ այս օրագիրը . անջրպետ մը մնաց ամէն ատեն իր եւ խուժանին մէջ . իր նրբամիտ հեգնութիւններէն չէր կրնար համ առնել հասարակութիւն մը որ միւս լրագիրներուն լեզուին ու ստորին հայեցողութիւնները լսելու սովորած էր : Մասնաւոր դասակարգի մը թերթը մնաց անիկայ յատուկ առանձնատնեակ ուր կոխ ու պոսչըտուք չի կայ, ուր էն ծանր խօսքերն անգամ մեղմ ձայնով կը զուրցուին : Շատերը եկան անցան անկէ՝ բայց ո՛վ որ ալ ըլլալ եկողը, քիչ ատենէն տանտիրոջ ձեւերուն ծաւրը կ'առնէր, իր բառերուն ընտրութիւնը բնելու, երանգները ճշգրտու արուեստին վարժութիւնը կ'ունենար, այնպէս որ տանտիրոջ քաջուելէն ետքն ալ անոր ձգած աւանդութիւնները անեղձ մնային հոն մինչեւ վերջը :

Գրական շարժումներթ ահաւասիկ շուրջ տասնութթ տարիներէ ի վեր՝ Մաւիս նոյն ազնուապետական հովը, նոյն խղճամիտ ջանադրութիւնը խմբագրութեան մէջ ու նոյն բարեկրթութեան մտադրութիւնը պահած ամէն առթիւ ու ամէն տեղ :

\* \* \*

1878ին տակնները, պատանի մըն էի ու ջերմ հակառակորդ Մաւիսին : Լրագիրին մէջ Նիկոլոս Թիւլպէնաճեանի թերթը, իմ բողոք ուժովս կը մաքաւէի ամէն անոնց դէմ որոնք հանդիսաւոր ու ճանչցուած ներկայացուցիչ էր Մաւիսը : Հոնկէ կը պատասխանէին ինծի . զիս հերքելու յատկացուած տողերուն



վրայ կարապետ Իւթի ճեանի հեզնող ծիծաղը կը նշմարէի, ծիծաղ որ զիւային բան մը ըլլալու էր :

Ըսի՞ ձեզի որ իմ գրացիս էր անիկայ, Պէշիկիթաշ, ճիշդ մեր քալի գրացին :

Առջի հեղ որ մեզի այցելութեան եկաւ անիկայ, հետաքրքրութեամբ դիտեցի այցելուն. ա՛յս էր այն աներեւոյթ ոգին որ Մաւիսը կ'երկնէր. սովորական մահկանացու մըն էր անիկայ. եւ ոչինչ կը զանազանէր զինքը ու բիշնիւրէն. ես իմ երեւակայութեանըս մէջ բաղորովին սարբեր մէկու մը կերպարանքին տակ պատկերացուցեր էի այս մարդը ուրիշ թագական ու քարոզիչ կը դառնայ :

Այս տեսակ սթափումներ շատ հեղ տեսած եմ իմ շուրջս ալ, իմ անձիս համար արտայայտուած : Զիս՝ պարթեւ հասակով, գեղեցիկ մօրուքով, լուրջ ու խոժոռ մէկը երեւակայողներ շատ ունեցեր եմ ու քիչ չեմ զուարճացեր տեսնելով այս մարդիկը ինքզինքս ճանչցնելուս՝ ապշած, գրեթէ չի հաւատալու պատրաստ :

Իմ առաջին սոցաւորութիւնս ակնածանքով խառն գոնուակութեան զգացում մը եղաւ. Իւթիւճեան մեր գրացին՝ Մաւիսի չորս մեծագիրք էջերը իմ արամագրութեանս տակ զգացի ու իսկոյն պլախի ու վեճերոտ փորձով մը մօտեցայ իրեն :

Ո՞վ բանաստեղծ չէ եղած քիչ մը ստանդհինգէն մինչեւ իր քօան տարիները. երեւակայեցէք թէ ինչ էի ես այդ միջոցին, երբոր հիմայ քառուստիս մօտ — ինչո՞ւ ճիշդ քառուստիս մէջ ըլլալս խոստովանելու արիւթութիւնը չունիմ արդեօք — գեւ քերթուածներ կը հրատարակեմ :

Այն զոր մատուցի իրեն, նոր մեռած ազնւիկան մը մահուան առթիւ գրուած էր. այն ասեւտուան սիրող միակ բանաստեղծական ձեւն էր աս :

Միթիթարեանները մտուցեր էին ասիկայ մեր մէջ. Պէշիկիթաշեան, Թէրզեան, Աճէմեան Վեհեարիկէն հետեւին իրենց ճամբարութեան սնտուկումն մէջ բերեր էին զայն : Ոչ ոք կը մեռնէր Պօլսոյ մէջ առանց կանխապէս ապահովելու որ իր ետեւէն հաս-

ցնենն ոտանաւոր մը որ սովորաբար սա վերնագիրը ունէր,

Ի Ս Գ Ա Լ Ի Մ Ա Շ

ՕՐ. ՆԵՆՏՏԱՐ ՄՐՄԱՔՅՇԵՍՆԻ

Այս օրուան պէս միտքս է չար ու հեզնող ժողիւրը զոր իմ քերթուածիս ընթերցումը պատուոց Իւթիւճեանի շրթունքին վրայ եւ այն ձեռքի յուսահատեցնող շարժումը որով իմ գեղեցիկ ոտանաւորս ինծի վերադարձուեցաւ : Այդ վայրկեանին, իմ բոլոր ատելութիւնս որ տեղի տալու վրայ էր, արթնցաւ նորէն այս ազնուականներու շոջերութեւրից դէմ. այնքան որ բոլոր զայրոյթս ու մաղձս Իւթիւճեանէն անցնելով անոնց վրայ թափեցաւ :

Հո՞ղիէ արդեօք մնաց անոնց դէմ այն բոլոր արհամարհանքը զոր մինչեւ հիմայ կը պահեմ որախ խորը. չեմ գիտեր :

Մաւիսին հետ հաշտուելու ի դերեւելած այս փորձէն ետքը ո՞վ պիտի գուշակէր որ օրին մէկը շարաթաթերթ Մաւիսին մէջ պիտի հրատարակուէր իմ առաջին վէպս : 1886ին մօտերն էր երբոր Արեւելքի խմբագրական մարմինը որ Մաւիս շարաթաթերթին ալ խմբագրութիւնը կը վարէր, կարդաց «Անհետացած Սերունդ մը» ին մէկ երկու գլուխները ու հաւնեցաւ անոր. հիմայ միայն կը մըրձնեմ որ զիս քաջալերելու կամքէն զատ ոչինչ կրնար իմ հէք վէպս հիւրընկալել ապա Մաւիսին մէջ :

Աղէ՛կ եղաւ, գէ՛շ եղաւ ասիկայ. լուսագոյն չէր ըլլար թէ՛ ինծի եւ թէ՛ անոնց համար որոնք իմ գրածներս կը կարդան, որ այդ վայրկեանին նոր մերժումով մը գրական ասպարէզը բոլորովին փակուէր իմ առջեւ :

Հիմայ, շատ մը տարիներ անցան ատար վրայէն եւ սակայն այդ սղորմելի նախափորձին հրատարակուիլը թուական մը կը կազմէ ինծի եւ շարաթաթերթ Մաւիսին համար : Զեմ կրնար առանց խորապէս յուզուելու մտքովս վերադառնալ այդ տարիներուն : Նորէն երիտասարդանալու պէս բաներ մը կը զգամ ներսիսիս, նոր կոչում մը, անձանօթ ձայներ կը լսեմ շուրջս :

Ու յետոյ, իմ խմբագրապետութիւնս այս

չարաթաթերթին մէջ . տեսէք ուրեմն որ , իմ գիրքս հրապարակագրութեան մէջ , պարզ զինուորի աստիճանէ սկսուած բարձրացում մըն էր , եթէ նմանութիւնը ներելի է ինծի :

Ինչ որ կրնամ հաւատուիլ , սա է թէ երբէք չի մոռցանք որ այս գրական միակ շարաթաթերթը վարելու պատիւէն անբաժան էր մեծ պատասխանատուութիւն մը :

Տարիներու ընթացքին մէջ գաղափարները ու մարդերը փոխուած էին բոլորովին , ու այս յեղաշրջումին մէջ Մախիս նորէն գլուխը պէտք էր մնալ Պոլսոյ հայ հրապարակագրութեան մէջ , ճիշդ ինչպէս իր հոյակապ հիմնադիրը պահած էր զայն ցորչափ ինքն էր անձամբ զայն հրատարակողը :

Ես ու բարեկամներս թերացանք թէ ոչ այս մտադրութիւններնու մէջ , ասիկայ մեզի չիցնար վճռել : Այն ամէն յաջողութիւնները որոնք աշխատութիւնով , անձնուիրութեամբ կրնան միայն ձեռք բերուիլ , այդ բոլորը Մախիսին բերած ըլլալուս համոզումը ունիմ . իսկ անոնք որոնք բնածին սաղանդով միայն կը բերուին , ասոնք ալ ունեցանք թէ ոչ՝ Մախիսին ընթերցողներուն կիցնայ ըսել :

\* \*

Կէս դարի անջրպետ մը կը լեցուի Մա-

խիսն առաջին թիւէն մինչեւ այսօր : Մինչդեռ մարդերը կը ծերանան , իրենց հիմնած գործերը օր օրէ աւելի կ'երկատարգանան , նոր սյովերով կը շարունակուին : Տարօրինակ ճակատագիր աշխարհային բաներու որ օրագիրի մը մէջ աւելի սյօժ , հոգի ու կենդանութիւն կը դնէ քան թէ զայն հիմնող մարմնին մէջ :

Պատճառը այն է գուցէ որ օրագիր մը իր ճշմարիտ կոչումին պատասխանելուն , կը դադրի ասօր կամ անորը ըլլալէ , հանրութեան կը պատկանի ա'լ , ամբողջ հասարակութեան սեպհականութիւնը կ'ըլլայ եւ պատճառ մը չիկայ , որ անոր վիճակակից չի շարունակուի այդ հասարակութեան կեանքին բոլոր տեսողութեամբ՝ իր վրայ անեղծ պահելով գրոշմը բոլոր պատմական անցքերուն :

Եւ այսպէս երբոր կը տրուի իրեն յիսուն տարիներու շրջան մը բոլորել , իր հիմնադրին սկսելով բոլոր աշխատակիցները իրաւունք կունենան արդար հպարտութեամբ մը ողջունելու զայն :

Գ. ԶՕՀՐԱՊ

### ՅՈՎՈՒՆ ՎՐԱՅ

Երկիմբին անձալ կապոյսին սակեճ ,  
Կը սանի նաւը՝ բնդարձակ ծովուն  
Կապոյս պիտի վրայ , զոր կը լըլկեն  
Հարաւեճ փախչող հովեր մոլորուն :

Ու կղզիները , փախած եզերեճ ,  
Ովասիս՝ ջուրէ անապասներուն ,  
Կապոյսին ծոցը արաս կը ձըգեճ՝  
Կոյսի մը առջի մեղքին պէս սիրուն :

Ռհ , կոյսեր են այդ կղզիներն արդեճ ,  
Ռր կը պառկին հոն՝ արեւով արբեռ .  
Սիրոյ երազներ՝ որ ծովը կ'օրրեն :

Երգուած խորեճ է աս նաւասիին ժիր՝  
Ինչպէս փերոզին , երկնի սիրահար :  
Կըղզիներն՝ իղձերս , ծովն ալ սիրս է յար :

ՎԱՅԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ



## ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

# Տ Ա Ն Ի Ք Ի Ն Ա Ղ Զ Ի Կ Ը

Արեւը, Խաչօ-Մելիքենց բլուրն ի վարարագ արագ իր մուտքը կերթայ, Ծղրիդները ասկէ անկէ վերահաս զիշերին սուգը եղբերգելու անսիրտ սկսուածք մը կ'ընեն, Իրկուն կը պոռայ աքաղաղը, ժամկոչն այ իր փայտէ կոչնակին բուժ թիք թաքովը կ'որ, կ'որ իրկուն կը «ձէնէ» :

Մտաւտանին շուքը պարուրած է արգէն հունա արագիլին ալ թառը, որ կ'իսաւեր տունի մը ծխանին կատարքը շիներ է : Արագիլին բոյնը, հրքէն ի վեր է, ինք չիկայ հոն, ու անտէր բոյնը շաղկաղի ճնճղուկներուն հով, հանդիսա գրօսավայր մը կը մնայ :

Քիչ մը ետքը, ցորեկի ամայութիւնը կեանքոտ ժխորի մը տեղ կուտայ, նախիրին գոռում գոչումը պիտի սկսի : Նոր ծնածները խաղալէն խեղկտալէն իրենց մայրերը պիտի զիմաւորեն, հորթը, սւլը, գառնուկը ու սուցիկ, կաթնածոր ուրերու (1) վրայ պիծակներու պէս պիտի փակչտին : Ուրերը ուսուցիկ ու կաթով լեցուն, գմբուխտ սէզերուն հետ վայրի բաղեղին ու խնձոր (2) խլորեկներուն անուշ հիւթովը շէնցած են :

Բակին տեսարանը, ոչխարներու բակին եւ ու զեւր, այն պահուն, ուր մայրերն ու ձագաթքը կարօտցած իրար կը գտնեն յանկարծ :

Անդին ծերուկ մաման բո՛ւֆ, բո՛ւֆ փիլաւին կրակը կը հրարէ. ծխաններէն վեր մուխերուն ծառ ծառ վերելքն ու կազմած ճիւղերը, այնչափ մօտը կանանչ ծառաստանին, կապոյտ ծառներով, կապոյտ անտառի մը պատրանքը կուտան :

Բանուր տղաքը, հարաները յոգնածի նազոտ կոտարուքներով, իրենց մեծերէն զիժար, իրաւացի պահանջներ մը կ'ընեն : Պա-

հանջներ, կատակներ ու պզտիկ հարսին անձրկութիւնը ակնարկող հեգնութիւնները շաչող ծիծաղներով ընդմիջուած, երկինքէն անցնող ճուռակներուն ցրուուն ճոխները կը յիշեցնեն : Կեսուրը հարսին մէկուն հիւքը կը շոյէ բուխ գորովանքով, այն միւսին մատին պատառը կը կապէ, ուր մանգաղը հետք մըն է ձգեր, պզտիկ հարսին խոստում, երզում, որ շաբաթ իրկուն մարոնցը խրկէ :

Զուա՛րթ, զուա՛րթ, զուա՛րթ, դաշտէն տունը այսպէս, տունէն դաշտը ծծղերես : Տարին որ կանցնի, յաջող տարի մըն է եղեր, լոպը, մարախը, սերմնաքաղը վնաս մը չեն տուեր ցանուածին, մէկը տասը, մէկը տասնըհինգ ու աւելի արդիւնք կը խոստանայ, մանգաղին արծաթ բերնին վրայ ոսկի հունձք մը ու նմանը քիչ անգամ տեսնուած :

Երգիքին տակ, ճրագուսուն, բանուր ընտանիքը իր մեծերովը պզտիկներովը լայն առանձին շրջանակներով սեղաններ կը բլրեն, դգալներուն շարքը ելեւէջքը դարբնոցին մուրճերուն գործունի շարժունութիւնը ճիւղ :

Կուտեն, հեւալով կուտեն, արտորնօք ու ախորժով կը թխմեն, չոր հացին պատառը շաքրէ կարկանդակի մը համովը կը հալի բերուրնուն մէջ, ու կարմիր կուժին զուլալ, պաղ ջուրը ծարուած եղջերուին խանձումովը բերուրնուն բռնած՝ կարմիրդարի զինիէն ալ անուշ, կաղզուրիչ է կ'րսեն :

Հալալ վատտակ, հալալ վայելք :

Սեղանը կը վերջանայ, փշրանքները կը ժողվուին, հէնց աս փշրանքներէն խոչոր, ահագին սակառներ կը լեցուին : Քրտինքով օծուած աշխատութեան հացն է, որ չապառի, ու զեւ ստ հացին յետին թափթփուքներովը փողոցին անօթի շուներն ալ պիտի կշտանան :

(1) Ուր- ԿԹան չորքոտանիներուն ծիծը, (2)- վայրի խոտ մը :

Հայէն եաքը , հանգիստ մը տանիքին վրայ : Այդ անձածք աղւոր ննջարանը գեղացիին , որուն մէկ ծայրէն միւսը նեա նեա գեաին չիշար , դուր պաշտի մը երեւոյթը ունի , ուրկէ ծաթրինին հոտովը խնկուած իրկուայ հովերը կը ճամբորդեն եւ որուն վերօքը , իրենց՝ առ արեւորդիներուն ընտանի լուանակ քեռին (3) է որ կեցեր հոն այնքան մօտ , կնդամախիներուն պոխը , վկայ մը կ'ըլլայ տանիքին բազմութեան անցուցած աշխատալի օրուանը , վկայ մը անոնց խուռնկ քունին :

Տանիքը , անկողիններու երկայնքին փռուած , ու քարի չափ կարծր բարձր մէջքերուուն , որուն ալ վարժուեր էին , կը թողուն պահ մը վարինները ու իրենց վերի դրացիներուն՝ լուսունկային դիմացը կը թարթեն աչուքնին : Ու վայրկեան մը լուսունկային դարձած , անոր հետ իրենց հետաւորներուն բարեւ , շատ բարեւներ կը խրկեն , կարօտով բարեւներ , սիրավառ ոսկի ժպիտով բարեւներ : Մեղզբարանքներ , խոտտովանանքներ , կրակ ու բոց երազներ , զոր արտայայտող բառը ոչ լեզուի վրայ կաց , ոչ գիրքի մը փաթը , ծրարւուկ , ամենքը ամենքը ան իրենց լուսակ քեռին , ծերուկ լուսակ քեռին ծիրանափայլ փէշը նետելով , թիթլեցած , մխիթարուած՝ անկողին կը մտնեն :

Ժամբը կը սահին մեղմով , յարգողը , եօթնադարը ալ նոյն տեղերը չեն երեւնար : Իրկուայ թեթեւ հովերը յոգնած , ուժաթափ հոն կանանչ տերեւներուն ծոցը , թաղին քընացողներէն աղւորին ծոցը , իրենք ալ աղաչողի փափուքներով , հանգիստ մը կը փնտռեն :

Արթուն մնացողը այն բուն է , կերեւայ , որ այն կողմը լքուած աւերակի մը ամայութիւնը կուլայ , այն ծղրիդները , այն «գիշերի ձայները» , որ մանկանց օրաններուն ու պառաւանց անկողիններուն համար գինովցնող քներգը կերգեն :

(3) Մայրերը երբ իրենց պատիկներուն լացը պիտի դարբնեն , մատով անոնց լուսնկան ցուցնելով կ'ըսեն «Լուսունկայ քեռի , (մօրեղբայր) մեր տունն եկուր , մեր մօտն եկուր , չամիչ բեր կարապետին , նուր ու խնձոր բեր մեր տղային , չէ նը , ա՛ն , ձեր գեղը տարա :

Տանիքին անդիի ծայրէն , այն անշարժացած անկողիններու շարքը , ծաղուող , ճմռթկուող վերմակի մը զգուշ , մեղմիկ զբրբասոցքը կը խուր անձկուտ , անհանգիստ շարժումի մը նշանները կան այն կողմը :

Այն կողմն ալ աղջիկ մըն է քունին դէմ ոգորողը , երէկ ալ , այսօր ալ արթուն կը մնայ , կը սպասէ որ իր սիրած աղուն հարէնը կախուրուն դիէն , մէյմըն ալ յո՛ւ , այն ձայնը մէյմըն ալ առնէ ու խբէ իր էրած հոգին մէջ ու այնպէս նեաէ գլխարկը բարձին :

Ամէն գիշեր , երբ արար աշխարհք քուն կ'ըլլայ , հոն լուս ցուիքներուն եղերքը , դաշտերու այն սիրահալ աղջիկն է որ «թարթիչ վրայ չի բերեր» , արթուն , միշտ արթուն , երկու քուրբարտոց (4) խորհուրդ կը հարցնէ . օր մը անոնք ալ իրեն ցուերը ունէին , իրեն պէս բռնի նշանուածներ՝ շտրածնուն հետ ինք ալ հիմա այն տեսակ ասարտով մը կը մրկուի , «փոխի՛ր իր ուզածին հետ» թէ ճակատագրին համակերպիլ :

Աչքերը սեւեռած չեշտ ան երկու քուրակներուն , ականջն ալ կախուրուն կողմը , իր սիրած աղուն կողմը , կը սպասէ երկար , գիշերին բոյսը մթութիւնը իր հոգին մէջ լեցնելով , կը սպասէ երկար իր անկողինին մէջ քարացած , պատասխան մը արձատցանգ մը իր թնձկանքներուն — կրբէ՛ք , երբէ՛ք : Ու խեղճ աղջիկը այսօր աւելի ջանջախուած քան երէկ , կուրծքը գիշերի հովին առջեւը բաց ձգելու վիճակին մէջ կը դնէ յուսահատ , հովին հիւրընկալի կ'ըլլայ , առ հովը շունչը գուցէ իր սիրած տունն , իր բամպակ լանջին վրայ կը սեղմէ , անոր հետ , գիշերն իրուն անոր հետ , անվերջ համայններ , անհուն սրտազեղում ու կարօտի փարու մը իր ուզածին հետ , այնպէս կը լուսցնէ գիշերը տանիքին աղջիկը :


**ԹՂԱՍՏԻՆՅԻՆ**

(4) Զոյգ մը լոյս , հարուի կողմը :

**ՀԻՆ ՕՐԵՐ**  
Ե Ի  
**ԱՅԴ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅ ՄԵԾԱՏՈՒՆՆԵՐԸ**  
**1550 1870**  
ԳՐԵՑ Յ. Գ. Մ.  
Կը ծախուի բոլոր Հայ գրավաճառներուն քով եւ Բերա վայսին խանութը :



# ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԵՆ



## ՄՍՄՈՒԼԻՆ ԵՈՒԲՋԸ

Երևք կամ չորս «Աշնան Նօթեր» մը միայն զրկեցի Մախիսին, հակառակ կանոնաւորապէս գրելու խոստումիս, եւ կը նշմարեմ թէ ձմեռուան կէսը հասած ենք արդէն: Վերնագրի փոփոխումը աւելի ճշգրտապէս պիտի դարձնէ՞ զիս արդեօք, — վերնագիր մը որ այս գաղջ օրերուն շատ չի մօտենար իրականութեան, ուր կրակ վառելու պէտք չունինք գրելից Պօլսոյ մէջ, նոյն իսկ այն ծովագերեայ զի զի անկիւնէն ուսկից կը գրեմ: Բնութեան այս թերին, — վասն զի ինչպէս գարունը իր ծաղիկները ունի, ձմեռն ալ անհրապոյր է առանց ձիւնի, — կերպով մը կը լրացնեն մեր առօրեայ թերթերը իրենց կրակուրոց պայքարներովը: Որքան ալ ուշադիր եւ խղճամիտ հետեւող մը ըլլաս այդ բանակաւորներուն, երբեք չպիտի կրնաս որոշ գիծեր նշմարել անոնց մէջ, գաղափարներու շարժը մղուած վէճեր, լայն հայեցակէտներով, հանրութեան օգուտին եւ հանրութեան հետաքրքրութեանը համար, ինչ խնդրի ալ վերաբերին անոնք: Խնդր «Գրականութիւն» սրուն անուանովը կ'երզնուն բոլորն ալ, զայն կը պաշտպանեն, զայն կը ձաղկեն, իւրաքանչիւրը իր ըմբռնած Գրականութիւնը: Եւ այս կեղծ եղի/եղիներու առատութեանը մէջ, հարազատը խոյս կուտայ, կը պակսի լրագրական հրատարակէն: Չէք զարմանար անշուշտ, եթէ մտաւորական արտադրութեանց վրայ խօսելու աւթիլ՝ առեւտրական բացատրութիւն մը — «հրատարակ» բառը — կը գործածեմ: Մեղքը իմս է . . .

Հապա երգիծական գրականութիւն ըսուածը՝ ի՞նչ այլոնդակութիւններու վերածեցին զայն, յորմէ հետէ հասարակաց ստացուածք դարձաւ անիկա, եւ ամէն յօդուածագիր, թարգմանիչ, սրբագրիչ, դեռ ի՞նչ գիտնամ, վերջապէս թերթի մը էջ մը ձեռագիր հասցնողը ու զայն սպուած տեսնողը՝ յաւակնեցաւ իր տաղանդին կէսը humoristique ձիւղին նուիրելու: Ատեն մը, երգիծանքը

կը խնդացնէր, կամ գէթ ժպիտ մը կը բերէր ընթերցողին այսին վրայ. հիմայ, կարեկցութիւն միայն կը շարժէ: Անցեալները Մաղիկ հասուած մը արտաապած էր Պարոնեանի հին գրուածքներէն, շաքարի վրայ. ես չի կըշտացայ կարգաւով այդ քանի մը պարզ տողերը որոնք յայտնի է թէ առանց ձիւնի, առանց աքնութեան, մեծ երգիծաբանին զրկէն թուղթին անցած են, վայրկենապէս, ու մինչեւ այսօր կը պահեն իրենց թարմութիւնը ու այժմեութիւնը: Աղէկ կըլլար որ այս տեսակ արտատպումներ կատարուէին երբեմն, մեզի յիշեցնելու համար թէ ի՞նչ է Փանթզզին, ի՞նչ է քրոնիկը, ի՞նչ է նրբամտութիւն ըսուած բանը որ տոմարակալութեան պէս չի սորվուիր եւ զորս չունեցողը իր կեանքին է՞ն խելացի գործը կատարած կըլլայ՝ զանոնք չի փորձելով: Այս տողերը գրուած վայրկենաիս, աչքիս առջեւ ունիմ, զիպուածով, «Խթան»ի մը — ի՞նչ ալ ճաշակաւոր ծածկանուն ու որքան պատուաբեր ընթերցողներուն համար — «Օրուան Խնդիրներ»ը սրոնք . . . երկու ամիսը մէկ անգամ կ'երեւան՝ միեւնոյն բաները կրկնելու համար կարծես: Բառի մը ծայրը տառի մը պակսիլը ան ի՞նչ պոռոտախօսութիւններու, բառախաղերու նիւթ հայթայթեր է այդ տիրացուին Մարդուկը երեւակայեր է որ, բովանդակութիւն մը դնելով յօդուածին գլուխը, մէջն ալ քիչ մը շուկայկան սրախօսութիւն խառնելով ու տակը՝ իր սիրելական ծածկանունը կպցնելով, քրոնիկ մը արտադրած կըլլայ, նոյնքան զիւրութեամբ որով Ներքին Լուր կը թարգմանէ: Դժբաղդութիւնը հոն է որ, ինքը մինակը չէ տեսակին մէջ, կը զարմանամ միայն թէ, — միշտ առեւտրական լեզուով խօսելու համար, — այս կեղծ ապրանքները այնքան առատ ըլլալով, միշտ սպառում կը գտնեն ու բաց débouchésներ ունին իրենց համար: Խնդրանքը այդքան առատ է:

Միեւնոյն փամանակ սեզանիս վրայ կը գտնուի Արեւելջի այդ օրուան թիւը, ուր արձակ satire մը կայ, ծայրէ ծայր սրամտութեամբ, գրական երգիծանքով հիւսուած, զոր Ալփասլանէն պիտի կարծէի . . . եթէ:



«Սողոմոն Աստիկ» նոր ծածկանունը չի կրէր ի՞նչ փոյթ սահայն ստորագրութիւնը, երբ գրուածքը յաջող է, ու կը կարգացուի համով հասով, Ա՛հ, եթէ այդ ֆանթէզիին հեղինակը, ու «Տօմինօ»ն ալ, որ այլապէս հաճելի ու ինքնայատուկ կերպով սիրուն ոճ մը ունի միշտ, քիչ մը փոխ տային իրենց գորաւոր ազէն՝ «Խթան»ին եւ անորպէսներուն անհամութիւնները մարտելի դարձնելու համար . . .

Կը մտածեմ միայն — սքանչացող մը ըլլալով արդէն «Սողոմոն Աստիկ»ի espritին — թէ Թէոդիկէն աւելի՛ արժանաւորները կան, մեր լրագրութեան մէջ, հեղինակեան կամ ծաղրանքի, Թէոդիկը եթէ աս ու ան կճած է քիչ մը, չար դիտումով չէ կճած, ս՛չ ալ մասնաւոր նկատումով մը կամ հաշիւով մը. իր Գրչի Լուսանկարներուն մէջ յաջողած մասեր կային, եւ այնչափ մեղադրելի չէ՛ եթէ լիառատ գնահատականներու մէջ պզտիկ խայթեր սլորդեցուց. ինքը խելօքիկ գրող մըն է, որքան որ կերեւակայեմ հեռուէն, ու մորթը շա՛տ փափուկ է տակաւին՝ լրագրական յարձակումներու դիմանալու համար, Լաւագոյն կըլլար որ այսքան շուտ դժտութիւններ չարծարծուէին իր անուան շուրջը, զինքը հեռացնելու աստիճան Մանգրուսէն, որուն յաջողակ աշխատակիցներէն մէկն է Քասիմէն ետքը, Բայց որովհետեւ անօգուտ է հաշտարարի դեր մը կատարել փորձել՝ Թէոդիկին ու Աստիկին միջեւ, կը շատանամ տպաւորութիւնս միայն ամփոփելով այս տողերուն մէջ :

Թէոդիկը գոնէ սա արդարացումը ունի որ ինքնաբերաբար կը գրէ, հաճոյքի մը համար, գրչի զբօսանքի մը համար, եւ այս տեսակէտով վեր է այն օգնական-խմբագրներէն կամ վարձկան աշխատակիցներէն որոնք իրենց patronին — լրագրապետին — քմահաճոյքին համեմատ գրիչ կը շարժեն, օր մը սեւ ըսելով միւլեւոյն գոյնին ու յաջորդ օրը . . . ճերմակ, Այս տեսակ արպարները արգահատանք չե՞ն ազդեր ձեզի, եթէ պատահած էք անոնց : Բարեկամներէս մէկը որ խմբագրատունները կ'այցելէ երբեմն, նկարագրեց ինծի վիճակը այդ գրչի մեքենաներուն որոնք, աւելորդ է ըսել, հեղինակութեան ոգիէ բո-

լորովին զուրկ, թերթին «Տէր եւ Տնօրէն»ին օրուան արամագրութեանը կը հասեւին՝ կարծիք մը կազմելու եւ յայտնելու համար :

— Ինծի՛ նայէ, սա Մաւիսը աս շարթու մեզի ակնարկութիւններ բրեր էր, խիստ պատասխան մը տո՛ւր :

— Բայց կը ներէք, ես զեռ անցած ամիս Մաւիսին նպատաւոր յօդուած մը գրեցի, հիմակ ինչպէ՞ս կ'լլամ . . .

Քու ինչո՛ւզ պէտք, ես չե՞մ բտողը : Ու օգնական-խմբագիրը, զլիւկեր, իր խցիկը կը քաշուի, միտքը կը տանջէ, եւ վերջապէս դիւտ մը կ'ընէ : Ու վերադառնալով «Տէր եւ Տնօրէն»ին քով .

— Եթէ կ'արտօնէք, փոխանակ յօդուած գրելու, անուղղակի պատասխան մը տամ «Նամակատուփ»ի ձեւին տակ :

— Կրլա՞մ մի ես . . .

— Ինչո՞ւ չէ : Ես գրեմ, կը հաւնիք : Եւ անա կը պատրաստուի հաշակաւոր պոլշեպիս մը որուն մէջ Բագնալիկար ու Մաւիսը, Պարաիզակը ու Պօլիսը, Թ. Գ. ը ու Ե. Ա. ը իրար կը խառնուին, վայրկեանը վայրկեանին բան մը գրուած բլլալու գոհունակութիւնը ատթելով մեծարայ լրագրապետին, — փոյթ չէ թէ գրուածքը առեղծուած մնայ :

Ասիկա զեռ փոքրիկ մէկ օրինակն է բարեկամիս պատմածներէն, — բայց ինքնին բաւական յատկանշական՝ ցոյց տալու թէ խմբագրական կարծիք մը ինչպէ՛ս կը դարբնուի ումանց քով :

Կանգ կ'առնեմ, չերկարելու համար նամակս, զոր նախամեծար պիտի սեպէի նուիրել բանաստեղծական նիւթի մը՝ զոր մարած կրակարանիս մոխիրները դժբաղբարար չեն ներշնչեր ինծի այս վայրկեանիս : Վառ նիւթի մը շուրջը գառնալ ուղեցի այս առաջին անգամուան համար, եւ լրագրաց զէզը՝ զոր Բօսթ-Լօքայը կը բերէ ինծի ամէն օր կանոնաւորապէս՝ հայթայթեց զայն :

Մաւիսը կ'ուրի թերթ չէ, գիտեմ, եւ ընդհանրապէս հետու կը մնայ անոնցմէ որոնք իրարու ծանր խօսք մը աւելի ըսած ըլլալուն, գրչի լուսանքներ տեղացնելու մասին զիրար գերազանցելուն մէջ կը փնտռեն յաջողու-



թիւնը : Բայց որովհետեւ իր վերջին թիւով , բացառաբար , խմբագրական մը գրած էր «Արագրական Բարքեր»-ու վրայ , օրուան այս ապաւորութիւններս ալ կրնան յաջորդել անոր , եթէ ուզէք : Ապա թէ ոչ , նեանցէք զամբիւղը :

ՄԵՆԱՍԷՐ

# ԱՅԽԱՐՀԻ ԹՐՋԱՆԸ

## ՇՐՋԻԿԻ ՆՕՅԵՐ

(Ժ.Բ.)

7 Յունիւ. 1902, Կիօքօ

Ձանձրոյթը շուտ կը ծանրանայ , մարդուն վրայ , Բէքինի մէջ : Ատիկա չինական ամբողջ քաղաքներուն յատկանիշը պէտք է ըլլայ , կը կարծեմ թէ : Շրջապատող իրերը , մարդոց ապրելու ձեւը , անոնց բարք ու վարքը , գրօսանքը , մէկ խօսքով ամէն բան , ա՛յնքան տարբեր է մեր տեսածներէն , եւ այնքան ծիծաղելիօրէն միամտուկ , ուրկէ կարելի չէ չզգուիլ ու չձանձրանալ , նոյն իսկ շատ կարծ ժամանակի մը մէջ :

Հակառակ քաղաքակրթութեան մէջ շատ կանուխ զարթնում մը ցոյց տուած ըլլալուն , Չինացիին կեանքը տակաւին նախնականի շատ մօտիկ դրոշմ մը ունի : Մեղուական , անգագրում գործունէութիւն մըն է իր կեանքը , պարզ , միօրինակ ու մեքենական գործի մը ետեւէն , օրերով , տարիներով յաւիտենապէս : Կեանքի բարդ այլազանութիւններ մը չիկայ հոն , որպէս զի Չինացին ստիպուած ըլլար տենդոտ կենցաղավարութիւն մը ունենալու : Պարզ , դիւրին կենցաղ մըն է իրը , զուրկ բոլորովին քաղաքակրթութեան վերնագաւառներուն վրայ սաւառնող մարդուն կեանքի թնճուկոտութիւններէն : Մարդ , հոն , պզտիկութենէն , արհեստի մը կը զըրուի , անոր մէջ կը մեծնայ , անոր մէջ կ'ապրի , ու անոր մէջ կը մեռնի : Ահա ամբողջ «ապրելակերպ»ը այս մարդոց :

Ոչ նուազ անհոգ ու պարզունակ կեանք մըն է նաեւ կանանցը : Արդէն , տեղային կարգ մը անիմաստ սովորութիւններ , կրօնա-

կան հնօրեայ հաւատալիքներ ու կնոջ դերին մասին քաղաքացիական անթիւ ազնոջ ըմբռնումներ , քանի մը տեսակէտներով , անոր տուած են ամէնէն ստորին տեղը , ընկերութեան մէջ , զոր մարդ էակը կրցած ըլլայ ունենալ , ո՛ր եւ է առեն :

Այդ զարհուրելի հաւատալիքներուն իրր գլխաւոր գլուխ-գործոց , Չուսիւնաի սովորութիւնը կայ , որ կնոջ համար կատարեալ պատուհաս մը եղած է :

Կրօնական այդ հաւատալիքին համեմատ , աղջիկ մը , արբունքի տարիքին մօտեցածին պէս , զայն կենթարկեն նմանը չլսուած վայրենական չարչարանքի մը , ուրկէ ազատելու համար կատուի հոգի ունենալու է աղջիկ մը : Չեմ գիտեր ինչ աւանդութեան հետեւելով , հարսնիքի չափ մեծ հանդէս մը կը կազմակերպեն աղջկան ծնողքը , եւ անհուն խրախճանութիւններով , կը կատարեն մատ կոտրելու արարողութիւնը , որ ուրիշ բան չէ , բայց եթէ խեղճ աղջիկներուն ոտքին բըթամատը , կամ ամբողջ մատները , — եթէ շատ երկայն են , — կոտրելով ոտքին տակը դարձնել , եւ այդ վիճակը կարենալ պահելու համար , երկաթէ ամաններու մէջ ածնել , ամիսներով , մինչեւ որ այդ ձեւին տակ կազապարուի ոտքը : Ու այդ փախուկի արարողութեան զուարճալի հետեւանքը ան կըլլայ որ , երբ մատղշուկ աղջնակները կազապարէն կելլեն , ոտքերնին չորոտանիի մը ոտքերուն կանոնաւոր կերպարանքը առած ըլլալով , եւ իրենք զուրկ ըլլալով զետնին վրայ չորոտանի մը ձեւացնելու ձիրքէն , կը սկսին թիթեռնիկներու պէս թռչալի , կաքաւի պէս ոստոտակ , թեւերնին տարածելով օդին մէջ , վայրկեանէ վայրկեան երեսի վրայ գլտորելու վախին ենթակայ :

Շատ զուրաճալի է անոնց այդ վիճակը , փողոցներուն մէջ , երբ խումբ խումբ կը շրջագային , եւ բոպական քիչ շատ պչրոտ արբուզարգերով , որոնց մէջ քիչ մը տարօրինակ շիւրանդէներ կը դառնան անոնք , իրենց բաց-խրուկ , մանր ու շեղակի ձեղքուած աչքերով , ու լաջնչի բերնով :

Իր այս բոլոր յուսահատութիւն բերող ազնոջութիւններով , Բէքինը օտարականին

համար անքնակելի տեղ մըն է , մանաւանդ ան մէջէ մէջ անցած հաստակուռ պարիսպներովը , որոնք խղզուիլ կը բերեն մարդուն վրայ :

Չորս օրուան աննիստ թափառումներէ ետքը , ամէնէն մեծ հաճոյքը որ կրցայ վայելել Չինու մարաքաղաքին մէջ , քանի մը Հայերու հետ տեսակցութիւնս էր , զոր Ռաբպա շնորհեց ինծի , իր բարեհամբոյր ներողամտութիւնով : Հայեր ըսի , ու զարմացաք հարկաւ : Հապա՛ , Մեր շահախնդիր վաճառականները , իրենց առեւտրական շահատակութեան փնտռումքը մինչեւ աս տեղւանքը երկարած են : Բէքինի ամէնէն ազուոր թաղը կը բնակին անոնք : Զարմանքներէ զարմանքի մասնուեցան մարդիկը , երբ իրենց ներկայացայ , յայտնելով որ Հայ մըն եմ , աշխարհաշրջիկ Հայ մը : Լեզուսին կատարելագոյնս մտոցած են ալ , ու տարօրինակ ապուլութիւնով մը կ'ունկնդրեն ինծի , երբ իրենց կը խօսիմ հայերէնը , զոր հասկնալ կը կարծեն , եւ ուրախ վերջիշումներ մը կ'ունենան , ամէն բառի առջև : Զուրի պէս կը խօսին իրենք չինարէնը , ու այնքան ձուլուած են ալ չինականութեան մէջ , որ մոռցած են թէ՛ տարբեր ազգութեան մը կը պատկանին իրենք :

Յաջորդ աստու՛ն , սրտաբեկ բաժանումով մը , ճամբայ կ'իյնանք Բէքինի պարիսպներէն դուրս , դէպի ծովազերք : Մինչեւ Թիէն-Չին , հիանալի ճամբորդութիւն մը կ'ունենանք , թէյի պարտէզներուն մէջէն : Կարմիր արեւին տակ , կարմիր գաշաւերուն մէջ , աղոց , նախշուն աղջնակներու , զառամած մամիկներու ետուզեաք մը , որոնք թէյ կը հաւքեն , կը վազվզեն , տեղական սիրուն կայթապարեր կը դառնան տղայ-մարդոց հետ , եւ ուսերնուն նետուած երկայն կանձօսի մը վրայ , ծայրերէն կախուած կողմներու մէջ , թէյը կը փոխադրեն շտամբան , կամ կը փռեն խանձող գետնին վրայ :

Շոգենաւ ու ծով , աղուոր հրապայրներ կ'ըլլան մեզի : Դեղին Մովին մէջ բանող այս շոգենաները հմայիչ սիրունութիւն մը ունին : Բոյսրովին չինական խելքով սիրուն բաներ են անոնք , թեթեւաչարժ , կակիկ , ու նորածեւ , մեղի համար : Սակայն հակա-

ռակ իրենց թեթեւաչարժ մակոյկի ձեւին , դանդաղ ճամբորդութիւն մըն է ընթացքը անոնց , Թիէն-Ցինէն մինչեւ Չի-Փու , ու յետոյ մինչեւ Օսաքա : Մովագնացութիւնը զրօսայի է ծայրէ ծայր : Շոգենաւը , Փոչի-Հաւնս (Կարմիր Արծիւ) , անընդհատ , կանցնի մանտրաթիկ կղզիներու մէջէ , ուր կը նշմարուին ցանցառ բնակարաններ , հրաբխային լեռներու ստորաք , եղէգի գաշաւերու մէջ կորսուած : Լերկ ըլլակներու կողերուն վրայ սեւ բիծեր կը տեսնուին հեռուէն , որոնք իրենց երկայն շուքը կը ձգեն հովիտներու կուշան ի վար : Դաւարաւէտ ծործորներու խորերէն , սրինգի եղանակ մը կը բրթի , ատեն ատեն , որ ճենաշխարհի սարօրինակ խողերով կը լեցնէ հովիտին լուծիւնը : Տեսակ մը սեփ սեւ ու ամեհի թռչուններ , իրենց չարագուշակ կոխիչը ձգած օդին մէջ , սեւ շուքեր խաղցնելով գետնին վրայ , ու կափկափելով , որսեր կը վերցնեն գետնէն , գորսեր , օձեր , յօգօշներ , որոնք կը ճուան , կը թոթուուին անպուծ թեւաւորներուն բերնին մէջ :

Բոլոր ասոնք հրապուրիչ եւ գինովցնող բան մը ունին : Շոգենաւին դարտափին վրայ աղուոր արեւի մը տակ , որ սակի ճառագայթներ կը մաղէ մեր գլխուն , կը դիտենք այս գեղեցկութիւնները , օրերով , ու չենք կշտանար :

Մեզ հիւրընկալող Չինասնայ բարեկամի մը խրատին վրայ , փոխանակ Ճարոնի մայրաքաղաքին , Քիօթօ կուղղուինք , հո՛ն զբանելու յոյսով այն բոլոր աղուոր նորութիւնները , որոնց փափաքովը վառուած ենք միշտ : Ճարոնի այս հին մայրաքաղաքին մէջ է , ըսին մեզի , ինչ որ կարժէ տեսնել , թղուկ ասիացիներու երկրէն : Քիօթօ , իբ Օսաքա նաւահանդիստով , աղուոր համայնապատկեր մը կը ձեւացնէ : Կոկիկ , սիրուն , ու շքեղ քաղաք մըն է աս , ուր հոյակապ շէնքեր , տաճարներ ու համալսարաններ , գեղեցկութեամբ կը գերազանցեն զիրար : Առաջին օրը , դեռ տեղ մը չիջեւանած , — զրօսաշրջիկին համար վայրկեանը ոսկի է , — կերթանք տեսնել , — ամէնէն հետաքրքրաշարժ բանը մեզի համար , — Պուտտայի տաճարը :



Գերագոյնացալէս հրաշակերտ շէնք մըն է, մեծ իմաստաւէրին անուան կանգնուած այս տաճարը, իր մարմարինէ սիւներով, սալաքարէ գեղակերտ կամարներով, հսկայ արձաններով, անդրիններով, որոնց մէջ ճարտնայած գոթականութեան մը նշոյլը կը փայլի, կ'ըսէ Բաիպա, իր գեղարուեստական հմտութիւնով: Շէնքին ճակատը, կանգնուած է Պուտաայի վիթխարի արձանը, բարձր գահաւանդակի մը վրայ:

Ճարտնի քաղաքական գիրքին մասին ըսուելու նոր բան մը չի կայ: Կատարելագլխու երոպական երկիր մը, բնակչութեան տարբերութիւններովը միայն: Ա՛հ, ինչ մարդիկ են սա սաստանաները: Իսելացիութիւնը, հնարագիտութիւնը աչքերնուն կը վազէ, Իրենց թղուկ հասակին մէջ իմացականութեան հարուստ գանձարան մը կայ: Կյոյր միօր, ճորճարով, կաշխատին, կը դատին, բայց իրա՛ւ իմացական ուժով կարողութիւն մը կայ անոնց ափ մը մարմինին մէջ:

Ճարտնականութիւնը այնքան մօտիկցած է երոպականութեան, իր ամէն ձեւերուն մէջ, որ, գրեթէ, նոր բաներ չէին մեզի համար, ամէն ինչ որ կը տեսնէինք Քիօթօի մէջ:

Ճարտնական գրականութեան մասին մասնաւոր հետաքրքրութիւն մը ունենալով՝ Բաիպա կառաջարկէ այցելել խմբագրատուն մը: Ուրբախութիւնով կընդունիմ առաջարկը: Յաջորդ առտուն, մեր ունենալիք եկեղեցի վիտին վրայ քիչ մը մտածելէ ետքը, կը ցատկենք կառք մը, կանոնաւոր լանսօ մը, ճարտնական առաջնակարգ խմբագրատուն մը ուղղուել հրամայելով, Կէս ժամէն, հոն ենք արդէն: Քիչ մը բերաննից բաց պիտի մնայ, երբ մանրամասնօրէն նկարագրեմ ձեզի Ազաւնա-Եւանսի խմբագրատան ընդարձակ շէնքը, շտկուած երոպական ամինանուրք luxեով մը: Մարմար 80 ոտք սանդուխներէ շնչահատ վերկելենք, Փրախաւոր պաշտօնեայի մը առաջնորդութիւնով, որուն հետ քարդերնիս կը զրկենք խմբագրապետին: Rédacteurի արտգոս տուած եմ ինքզինքիս, քարդիս տակ, Մախի չըջիկ աշխատակիցը ըլլալուս, — ո՛վ միամտութեանս, միւս կողմէ տեղեկութիւն ալ չունիմ թէ, կը հրատարակուի՞ն

Նօթերս. — Իսկ Բաիպա նոյնպէս կը ներկայանայ հնդկական չորս-հինգ թերթերու պատուակալ աշխատակիցի հանգամանքով: Կը մտնենք, լուրջ խոնարհութիւնով մը:

Քաղաքավարութիւնով կը մեծարէ մեզ խմբագրապետը: Յիսո՛ւս իմ, ան ինչ այլակերպ խմբագիր: Լայնատարած, մեծածաւալ, ամենի արարած մը, միտ ուռած զանգուած մը ամբողջ, որուն իրարու վրայ թաւալող փոթերուն եւ ծալքերուն մէջ, աչքերը, բերանը կը կորսուին կատարելագլխու: Աչքը բանալու յայտնի ճիգ մը ընելով, ու Քիչացող արասանութիւնով մը, կը սկսի խօսիլ բերնէն թուքի անձրեւ մը ցայտեցնելով: Բաւական աղուոր Քրանսերէն մը կը խօսի: Առեւտրական, գրական, եւ կարգ մը ուրիշ նիւթերու վրայ երկար եկեղեցի վիտ մը, որուն միջոցին կը մեծարութիւնք սքանչելի ֆախտով մը, չինական չափազանց գողարիկ գաւաթներու մէջ:

Երկար պիտի ըլլար հոս ամփոփել մեր տեսակցութիւնը Ազաւնա-Եւանսի լեռնածաւալ խմբագրին՝ Շէպլէկ-Վէրաքուզի հետ: Մինակ, պզտիկ անցք մը, տեսակցութենէն: Հընդկատանով չհետաքրքրուիր, արդէն բաւական բան գիտնալով անոր մասին: Մեր գրականութեան վրայ կը հարցնէ, շատ մը բաներ: Կը գտնայնեմ: Իրենց թերթին սպառումը կը հարցնեմ: Կը բերէ ցուցնել Ազաւնա-Եւանսի: Թանկի չափ թերթ մըն է:

— Սպասո՛ւմը, — կը պատասխանէ, աչքերնուս մէջ նայելով, թէ պիտի զարմանանք քիչութեանը վրայ, — տասնըհինգ հազար:

— Ա՛, ատ որչափ քիչ, ատ որչափ քիչ, — կը կտրեմ խօսքը, — մեր ամէնէն քիչ ծախուող թերթը նորէն առ նուագն երեսուն հազար օրինակի սպառում մը ունի, — սխալս ո՞վ պիտի շտկէր:

Ճարտնական սպընթիւնով մը, քար կտրած, երեսս ի վեր կը նայի, արմանալով զարմանալով:

Ես ալ կը զարմանամ, զլտորած հաւկիթիս վրայ:

Բայցատ . . . . .

Ա՛խ, ելեկարական լոյսը կը մարի պանդոխին, ու մոմ չունիմ քօվս: Մութին մէջ, գրչի խարխալանքով, երկու սող ու ստորագրութիւն մը գէթ . . .



ՔԱՅ ՆԱՄԱԿ

ՎԱՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ

ԳԱՏԳԻՒՂ, 22 Յունուար 1902

Սիրելի՛ս Վահան,

Սիրտս անհուն բերկրանքով զեզուն, կը փութամ հրապարակաւ ալ շնորհաւորել «Մերութիւն խղճահարութիւնը» նորավէպիդ փայլուն յաջողութիւնը Մախիսի բացած Մրցումին մէջ:

Կր զգամ թէ այն հոգեկան հրճուանքը զոր նախկին սանի մը յաջողութիւնը կ'առթէ իր դաստիարակի սրտին՝ լիովին կը փոխարինէ այս վերջինին բազմամեայ աշխատութեանց բովանդակ առժանքը:

Եւ ես՝ մէկէ աւելի անգամներ վայելած եմ այս հրճուանքը: — «Մերութիւն խղճահարութիւնը» քու յաջողութիւններուդ անզրանիկը չէ: Այս վերջին նորավէպիդ շափ, եւ թերեւս անկի՛ց ալ աւելի արժող գողարկ կը գրութիւններդ ժամանակէ մը ի վեր ստէպ կը տեսնեմ օրաթերթերու եւ պարբերականներու մէջ. գրութիւններ՝ սրունք կը հաստատեն թէ ո՛րչափ շատ աճած բարգաւաճած են բարոյական եւ իմացական դաստիարակութեան այն տկար սերմերը զորս ուսուցչիդ ձեռքերը խնամով զետեղեցին արգաւանդ սրբտիդ եւ բեզուն մտքիդ մէջ:

Այն յանձնարարութեանդ համեմատ զոր ըրած էիր Մախիսի վերջին թիւին մէջ հրատարակուած նամակովդ, այդ Հանդէսին խմբագրապետը երէկ անձամբ հաճեցաւ ինձի բերել յանձնել խոստացուած մրցանակը, սիրուն ոսկի ժամացոյց մը, որ իմ քով կը մընայ քու արամազրութեանդ տակ:

Գիտենք թէ հրապարակագրութեան ապարէզը ո՛րքան ապահորհ է տակաւին մեր մէջ: Լրագիրներ ու Հանդէսներ ընդհանրապէս մեծ դժուարութեամբ է որ կը յաջողին օրը օրին ապրիլ՝ հազիւ միայն կարենալով պահպանել իրենց գոյութիւնը: Նիւթական այսչափ աննպաստ պայմաններու մէջ, Մախիսի կողմէ՛ նորավէպի մրցումին առթիւ՝ այս նիւթական զոհողութիւնը ապացոյց մըն է

թէ այս պատուական Հանդէսը ո՛րպիսի առողջ ըմբռնումներ ունի Գրական Հանդէսի իր կոչումին ու գերին նկատմամբ՝ հանդէպ սոսմային գրականութեան զարգացումին:

Փափաղելի էր որ մեր արդի գրականութեան բոլոր բարեկամները գիտնային ըստ արժանւոյն գնահատել Մախիսի այս ըմբռնումը ու զոհողութիւնը, եւ ըստ այնմ՝ ընձեռէին նիւթական ու բարոյական ամէն քաջալերութիւն որու իրաւամբ արժանի է սոյն գրական շաքաթաթերթը:

Կը վերջացնեմ, սիրելի՛ սանս, սեղմելով աջի՛ որ, շնորհիւ անդուլ ու մեթոսիկ աշխատասիրութեանդ, յաջողած է այնքան գեղափայլ յղկել անտաշ գրիչը զոր անոր մէջ դրաւ դաստիարակդ

ՆԵԱՆ ԹՈՐՈՍԵԱՆ

Ծ. Խ. — Այս նամակը նախորդ շաբթուն ժամանակին հասած չըլլալով ձեռքերնիս, այսօր միայն կը հրատարակենք: Թէեւ մեր սովորութեան հակառակ ըլլայ Մախիսի վերաբերեալ որ եւ է գնահատական կամ համակրական գիր հիւրընկալել մեր էջերուն մէջ, բայց որովհետեւ Արմենի վարժարանի Տնօրէնին երկտողը միեւնոյն ժամանակ ստացադիր մըն է, ու միանգամայն անկեղծ զգացումներու արտայայտութիւն մը Վահան Յարութիւնեանի նկատմամբ, զոր նախանձառ գրիչ մը կը շարունակէ տակաւին հարուածելու ճղճիմ փորձեր ընել, մեզի պարտք սեպեցինք այս բաց-նամակին հրատարակութիւնը:

Յաւակցութիւն. — Արմաշի Գեր. փոխվանահայրը՝ իր ձեռունի մօրաքոյրը կորսնցընելու դժբաղդութիւնը ունեցաւ նախորդ շաբթու: Հանգուցեալը, Օր. Եւզինէ Գամպէրեան, մայրական գուրգուրանք ունեցած էր իր քեռորդիներուն եւ մասնաւորապէս Դուրեան Սրբազանի ու վաղամեռ բանաստեղծին: Պետրոս Դուրեանի վրայ, որուն քով թաղուեցաւ Իւսկիւտարի ազգ. գերեզմանատան մէջ, կիրակի օրը, եկեղեցական եւ աշխարհական յուզարկաւորներու սառաբազմութեան մը ներկայութեամբ: Մեր սրբաազին ցաւակցութիւնները կը յայտնենք Դպրեվանքի համակրելի Վերատեսուչին եւ ամբողջ Դուրեան ընտանիքին:



### ԼՈՒՍԱԲԱՆՈՒՅԻՆ ՄԸ

Թերթի մը նամակատուփէն կը տեղեկանամ թէ, միամիտ խելօք-դաւիթին մէկը, հատցնող մտատանջութիւնը ունեցեր է, քըն-նադատութիւն մը կարկտելու, Մաւիսի մէջ հրատարակած էտկար Բօէն մէկ թարգմանութեանս վրայ, ինչպէս կը կարծեմ թէ սա է իր միաքը :

Ու կը հասկնամ թէ ինչո՞ւ կըլլայ այդ բանը :

Ողբալի մոլորածութիւն մը կայ գործին մէջ, ու կը ցաւիմ որ, պարտաւորուած եմ այս առիթով, վեր հանելու մէկ երեւոյթը մտքի այն ողորմելի թշուառութիւններէն կարգ մը իմաստակներու, որոնցմէ այս միջոցիս քիչ մը շատ կը վխտան մեր գրական հրապարակին վրայ :

Խնդիրը իր ամենայնապէս պարզութեանը մէջ սա՞ է որ, խնդրոյ առօրկայ թարգմանութիւնը կատարուած է երկրորդ բնագրի մը վրայէն, եւ առիկա՞ եղած է պատճառ ինքնակոչ նորընծայի մը անպարկոտ իրարանցումներուն :

Բօ, գրելու մասնաւոր շրջանի մը մէջ, իր քերթուածներուն չկրնալ հաւնելուն, անխոնջ արագորդ մը իր բանաստեղծութիւններէն մէկ քանիին, սրբագրելով իր Անապիշ Լին, վերնագրով, fondsով, formenով, հիմնովին փոխած է գայն, եւ, իրա՞ւ, անոր վերջնական ձեւը, կատարեալ այլակերպութիւն մըն է նախնական բնագրին քով, որուն վրայ հաստատուած ըլլալ կ'երեւայ միամիտ քըն-նադատը, իր բաղդատութեան մէջ, ճանճ մը բռնած ըլլալու անախառ հրճուանքով :

Հէնալի եւ Ընկ. Գրատունը, Բօի սիրողներուն հետաքրքրութեան համար, ամբողջական հաւաքածոյի մը մէջ, հրատարակած է անոր բանաստեղծութիւններէն մէկ քանիին վերջնական ձեւերն ալ, որոնք իր բարեկամներէն մէկուն քով գտնուած են :

Ու այդ բանէն տեղեկութիւն չունենալուն է որ, անիմանալի գաղտնիքի մը առջեւ չփոթած մնացած, խեղճ ծաղկոցցու պարունիկը անպարանքի մը ինկեր է սխալ բռնելու : — Խղճալնիդ չի՞ դար ասանկներուն վրայ :


Ե. Ա.

ՆՇԱՆԱԽՍՈՒՅԻՆ . — Անցեալ կիրակի օր տեղի ունեցաւ Իւսկիւտար, Պառնասեանց բնակարանին մէջ, Գարեգին էֆ. Քորտոն-ճեանի նշանախօսութիւնը Օր. Վիքթորիա Պառնասեանի հետ, զուտար Վսեմ. Պառնաս Պօղոս էֆէնտիի, Գարեգին էֆ. Քորտոնճեան՝ Պէրպէրեան վարժարանի սաներէն է եւ կարեւոր դիրք մը կը գրաւէ Ոսկերիչներու Շուկային մէջ ուր իր եղբայրներուն ընկերակցութեա՞ր կը զբաղի գոհարեղէններու առեւտուրով : Օր. Վիքթորիա՞ շրջանաւարտ Մեղպուրեան վարժարանի՞ չայ գեղեցիկ սեռին պատուաբեր օրիորդ մըն է, սրտի եւ մտքի յատկութիւններով օժտուած :

Մեր խնդակցութիւնները ու շնորհաւորութիւնները կուզղկնք այս բերկրալի առթիւ Պառնասեան էֆէնտիին եւ երկու կողմի պարագաներուն :

Հացկերոյք . — «Իւնիօն» ապահովագրական ընկերութեան Թուրքոյ ճիւղին Ընդհ. Տնօրէն Սիմօն էֆ. Գայսէրլեան իր մօտաւոր ամուսնութեան առթիւ, կիրակի օրը Սըլանտիտի սրահին մէջ սեղան մը տուաւ իր ամբողջ պաշտօնէութեան : Աղանդերի միջոցին՝ թուրքերէն, հայերէն ու Ֆրանսերէն բաժակաճառեր արտասանուեցան : Ճաշէն ետքը, որ աւելորդ է ըսել շատ զուարթ եղաւ, ներկաները Ֆէպիւս լուսանկարչատունը երթալով խմբովին իրենց լուսանկարը հանել տուին :

### ՀԱՆՃԱՐԸ ԵՒ ՏԱՂԱՆԴԸ



Ի՞նչ է տաղանդը, ի՞նչ է հանճարը : Պատասխանը՝ այս հարցումներուն, սովորապէս կը կայանայ անորոշ բարբաջանքի մը մէջ, ուր կը տիրեն հիացողական գոյականները եւ գրուատողական անականները : Ասով չպիտի կրնայինք բաւականանալ : Ո՛չ թէ հետորական յարգալիք սեթեւեթներ պէտք են մեզի, այլ պարզ բաւականաչափ բացատրութիւն մը : Արդ կը կարծեմ թէ շատ աւելի կը մօտենանք ճշմարտութեան, ըսելով . — տաղանդը հակ մըն է որ ընդհանրապէս կամ յաճախապէս



կիրարկուած գործ ունէութիւններ կը կատարէ աւելի լաւ կերպով քան մեծամասնութիւնը անոնց որ կը ջանան իւրացնել միեւնոյն ընդունակութիւնը . հանձարը մարդ մըն է որ նոր գործունէութիւններ կ'երեւակայէ՝ ոչ տակաւին կիրարկուած իրմէ առաջ . կամ ճանչցուած գործունէութիւններ կը կատարէ ամբողջովին մասնաշատուկ եւ անձնական մէթոսի մը համաձայն : Կանխատեսութեամբ մըն է որ տաղանդը իբրև էակ մը կը սահմանեմ , եւ հանձարը , ընդհակառակը , իբրև մարդ մը : Տաղանդը , արդարեւ , երբեք չի թուիր ինձ սահմանադրուած միայն մարդկութեան համար . տարակոյս չկայ թէ գոյութիւն ունի ան կենդանական ցեղին մէջ ալ : Սկզբնայ մը որուն կարելի է ուսուցանել աւելի կնճուտ պտոյաներ քան ուրիշ շուներու , տաղանդ մըն է . նոյնպէս կարմրալանջ մը կամ շիկահաւ մը որ իր ցեղակիցներէն աւելի լաւ կ'երգէ . թերեւս նոյն իսկ կայծոսիկ մը որ միւս կայծոսիկներէն աւելի փայլուն է , եւն . : Հանձարը , ընդհակառակը , իբրև անհատական արտայայտում , միայն մարդուն մէջ երեւակայելի է : Մեր սահմանումին համեմատ , հանձարը կը կայանայ այն իրողութեան մէջ որով անհատ մը կը հետեւի իրմէ առաջ երբեք չփորձուած՝ չքերուած ուղիներու : Այնպիսի գործ մըն է աս զոր ոչ մէկ անհատական կենդանի կ'ընէ , որչափ որ մարդկային գննութիւնը կրցած է հաստատել : Տեսակներ ամբողջովին — կրնան ընել այդ բանը , կրնան ուրեմն հաւաքականորէն օժտուած ըլլալ հանձարով : Ապրող էակներու համայնքը անպահօլապէս կրնայ ընել նոյն բանը : Գործարանաւորութիւններուն ընաչրջութիւնը , միարջիջային էակէն մինչեւ մարդը , կը հաստատէ այս բանը : Կրնանք ուրեմն ըսել . — գործարանական աշխարհը , իր ամբողջութեանը մէջ , հանձար մըն է , ընաչրջութիւն եւ հանձարայնութիւն հոմանիշ են իրարու , եւ ընաչրջական վարդապետութեան տեսութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ հասկացումը եւ հռչակումը հանձարի մը գործողութեան՝ գործարանական աշխարհին մէջ : Ստուգապէս անհատական կենդանիին քով ալ կայ զարգացումի փոքր ինչ ձգտում մը ցեղին ժա-

ռանգական արդարէն գուրս շեղելու , որովհետեւ պէտք է որ այն փոփոխութիւնները զորս կը տեսնենք տեսակներուն յորինուածքին եւ մասնավիճակին մէջ՝ երկար ժամանակամիջոցներէ յետոյ , կատարելագործուած ըլլան անհատներու մէջ : Բայց , անհատական կենդանիին քով , հինէն գուրս շեղումը եւ նորին ձգտումը այնքան տկար են , որ կը պարտինք անտեսել զանոնք , որովհետեւ չենք կրնար զանոնք իմանալ : Մեզու մը որ վեցանկիւն ըջիջին տեղ , ութանկիւն կամ քառանկիւն ըջիջ շինէր , — ծիծեռնակ մը որ իր բոյնին համար նոր ձեւ մը գտնար , եզ մը որ աւելի ուղէր սպաննել ինքզինքը քան թողուլ որ զինքը սայլին լծեն , հանձարներ պիտի ըլլային : Աշխարհը , սակայն , զեռ չէ տեսած այդ տեսակ երեւոյթներ , մինչդեռ տեսած է ժառանգուած՝ հին գործունէութիւններու համարժէք շեղումներ կատարելու կարող մարդիկ :

Ուրեմն , տաղանդին եւ հանձարին միջեւ , ոչ թէ քանակական տարբերութիւն մը , այլ որակական տարբերութիւն մը կայ : Այս մասին , չեմ վարանիր սակայն ըսել թէ , մեր վերլուծումը մինչեւ իրաց խորը մզելով , հուսկ ուրեմն կարելի կ'ըլլայ ամէն տարբերութիւն վերածել աւելի մը կամ պակասի մը հարցին : Միակ օրինակ մը պիտի բաւէ : Պատմութեան ուսուցիչ ըլլալու համար , մարդ պէտք ունի բաւականաչափ յիշողութեան , կամքի եւ դատողութեան : Այս յատկութիւնները միանալով սակայն , միմիայն կը յանգնին միջակութեան մը որ ի գլուխ կը հանէ իր գործը , չա՛տ չա՛տ յարգելի տաղանդի մը : Բայց երբ այդ յատկութիւնները արտակարգ զօրութեան մը աստիճանին մէջ կը գտնուին , անոնց արացողը կրնայ պետական մեծ մարդ մը ըլլալ , ժողովուրդներու պատմութեան նոր երեւոյթ մը տալու իսկ միտի թերեւս , եւ կրնանք այդ անձը որակել իբր հանձար : Տարբերութիւնը , ճշմարիտ է որ միմիայն միեւնոյն յատկութիւններու տարբեր մեծութեանը մէջ կը կայանայ . սակայն եւ այնպէս այդ տարբերութիւնը այնքան կարեւոր է , որ քանակական տեսակէտով միմիայն իրարմէ տարբերող այդ երկու երեւոյթները , նոյն



ինքն իրենց իսկութեանը մէջ իրարմէ տարբեր ըլլալու եւ իրենց միջեւ միութեան ոչ մէկ կապ ունենալու ապաւորութիւնը կ'ընեն : Այսպէս , Մօն-Պլանը եւ քուարցի հատիկ մը իրարմէ միայն քանակականօրէն կը տարբերին : Իսկապէս , միակ եւ միեւնոյն բանն են : Քուարցի հատիկը պէտք էր միայն շա՛տ մեծ ըլլալ , եւ պիտի ըլլար Մօն-Պլանը , այս վերջինը մինչեւ դէպի գրեթէ աննշարելի համակազմոյքը պէտք էր սեղմակծկիլ միայն , եւ պիտի ըլլար աւազի հատիկը : Այլ սակայն կը տեսնենք որ մեծութեան միակ տարբերութիւնը բաւական է իրենց իսկութեանը մէջ նոյն եղող երկու իրերը վերածել երկու երկու երեւոյթներու՝ արմատապէս իրարմէ ա՛նքան տարբեր որքան Մօն-Պլանը եւ աւազի հատիկը :

\* \* \*

Ուրիշ տեղ մը (\*) ջանացած եմ ցոյց տալ արդէն թէ , ամէն գործարանաւորութիւն չի կրեր կարողութիւնը յարմարելու՝ Չլային եւ դեղերային գրութեան հակազդումներով , այսինքն անձնական եւ նոր գաղափարներով ու գործքերով , արտաքին աշխարհէն եկող ապաւորութիւններուն : Միայն այդ բանը կրնայ ընել գործարանաւորութիւն մը մասնաւորապէս կատարելագործուած , մասնաւորապէս ձօխ կենսական գորութեամբ , Հանձարը , որուն կը կարծեմ ճանչնալ իսկական յատկութիւնը՝ արտաքին աշխարհէն առնուած ընդհանցութիւնները իր մասնաւոր կերպովը ներակազմելու կարողութեանը մէջ , հաստատապէս իրրեւ նախադրեալ ունի գործարանական վերին զարգացում մը . իր մաքին ստեղծաշարը կերպով մը ութեակ մը աւելի ունի : Ո՛չ մէկ պատշաճեցում , ո՛չ մէկ վարժողութիւն չեն կրնար տալ այդ աւելի մեծ տարածութիւնը , զի այդ տարածութիւնը գործիքին շինուածքէն կը հետեւցուի , կէօթէ՛ որպէս թէ ծաղրածութեամբ եւ ամէնէն անմեղ դէմքով՝ կ'ըսէ . «Մխրճեցէ՛ք միայն մարդկային կեանքին խորը» : Զուարճարանը որուն բերնին մէջ կը գնէ հեղինակը այս խօսքը , կամայ մը ծաղրող չարածձի մըն է :

Այս մտածումը միամտութիւն մը կը թուի ինքնին , եւ իրապէ՛ս հպարտ ինքնագովութիւն մըն է մտքի մը՝ բարձրօրէն վստահ ինքզինքին վրայ . «Մխրճեցէ՛ք միայն մարդկային կեանքին խորը» : Արդա՛րեւ : Յանձնարարակերպը երաշխաւորուած է , քայց հանձար մըն է որ կը պարտի հետեւիլ անոր : Սովորական մարդը եւ նոյն իսկ օժտուած մարդը երբեք չի գիտեր թէ ի՛նչպէս պիտի սխի առանկ մխրճում մը կատարելու համար , եւ երբ կը փորձէ , ձեռնունայն ետ կը դառնայ իր փորձէն : Որովհետեւ , միջակ մարդը , եւ տաղանդն ալ հաստատապէս , ա՛յո , այդ կարգին մէջ կը դասեմ ես , երբե՛ք չի տեսներ աշխարհը , այլ միայն իր նշոյլը հանձարին աչքերուն մէջ : Կը տեսնէ «ամբողջ մարդկային կեանքը» ո՛չ թէ կերպաւորիչ կերպով ցցուած իր առջեւ , այլ հանձարին մոգական լապտերին միջոցաւ պատին վրայ երկարաձգուած չինական ստուերներու պէս միայն : Միջակ մարդը եւ , դարձեալ կը կրկնե՛մ , տաղանդն ալ , պարա՛պ տեղ կը ջանան բռնել իրենց ձեռքով այդ բազմերանդ ու խլըրտուն ստուերները , ոչ ի՛նչ պիտի կրնան բռնել : Աշխարհին երեւոյթը կը կազմէ նախնական նիւթ մը որով բան մըն ալ չի՛ կրնար ընել միջակ մարդը , որով միայն հանձարը կրնայ կազմել բան մը զոր այդ միւսը յետոյ կը յաջողի նաեւ բմբռնել : Եթէ միջակ մարդը կը տեսնի իրերը եւ իրողութիւնները սահմանագծուած խմբակարգերով , անոր համար է որ հանձարը նախապէս հաստատած է այդ խմբակարգերը , եթէ աշխարհը եւ կեանքը կը ներկայացուին իրեն՝ համացոյց պատկերներու ձեւին տակ , անոր համար է որ հանձարը ամփոփած եւ շրջանակած է զանոնք : Կը զգայ , կը գատէ եւ կը գործէ , որպէս հանձարը կը զգայ , կը գատէ եւ կը գործէ իր առջեւ առաջին անգամ : Գալով այն երեւոյթներուն զորս հանձարը գործարանապէս չէ ներակազմած դեռ , այդ միջակ մարդը կ'անցնի անոնց առջեւէն առանց զանոնք նշմարելու , առանց անոնցմէ բան մը զգալու , առանց զանոնք դատելու :

Կարելի է միայն աւելի յստակօրէն ցոյց տալ այս համեմատութիւնը , փոխ առնելով

(\*) «Մեծամասնութիւն եւ փոքրամասնութիւն» :

բաղդատութիւն մը գործարանական աշխարհէն : Այն նիւթերը որոնց ամէն ապրող էակ պէտք ունի իր սնունդին համար , մանաւանդ բնածուխը եւ բորակածինը , ամէնուրեք կը գտնուին հողին վրայ անսահման չափով մը . բայց կենդանիները ոչինչ կրնան ընել անոնցմով , չեն կրնար գտնուիլ գործածել այն ձեւին տակ ուր բնութիւնը կը հայթայթէ զանոնք իրենց նախապէս : Ածխական թթուով լեցուած մթնոլորտի մը մէջ , բորակատներով լիովին ճոխ հողի մը վրայ , կենդանի մը պիտի կորսուէր խղճալի կերպով : Մինակ տունկը , եւ , տունկերուն մէջ , միմիայն կանանչանիւթ պարունակող տունկը , արամադիր է ի սնունդ ներակազմելու այդ առաջին նիւթերը : Միայն այն պարագային երբ այդ տունկը իր գործարանատարութեան մէջ ներակազմած է բնածուխը եւ բորակածինը , այդ երկու կազերը կարող կ'ըլլան իրիւս սնունդ ծառայելու կենդանիին : Բացարձակապէս միեւնոյն բանն է հանճարին եւ ոչ-հանճարին համար ալ , տազանդն ալ մէկտեղ առնելով : Ոչ-հանճարը չի կրնար մարսել բնութիւնը , զայն իւրացնել , զայն փոխակերպել իր գիտակցութեան կազմակերպիչ մասերուն : Կը տեսնէ երեւոյթները , բայց անոնցմով ո՛չ մէկ պատկեր կը կազմէ . կը լսէ , բայց երբեք չըմբռնեւր ո՛չ ալ կը մեկնաբանէ , Հանճարը , ընդհակառակը , մասնաւոր բան մը ունի իր մէջ , տեսակ մը կանանչանիւթ , մեր առած օրինակին համեմատ , որ զինքը կարող կ'ընէ , երեւոյթներու միջոցաւ , կազմելու մտային կատարեալ ներկայացումներ զորս մարդկային սովորական միաքը կրնայ յետոյ ընդունիլ իր գիտակցութեանը մէջ :

Թարգմ. Ծ. Գ. ՄԱՔՍ ՆՕՐՏԱՌԻ  
(Շարունակելի)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ (Հետաքրքրաշարժ Վեպ երեք հատորով) Թարգմ. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ : Վաճառման կեդրոնատեղին է Պաղատալեան Գրատունը : Կը գտնուի նաեւ ամէն հայ գրավաճառներու քով :

Գին 15 դրուշ :

1—10

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ հինգ-չարթի գիշեր , 7/20 փետրվար , դեսպան իշխան Միրզա Բիգա Քանի բարձր հովանաւորութեան տակ , ի նպատակ պարսիկ վարժարանի որր ազոց ու նորահաստատ հիւանդանոցին :

Այս տարուան նուագահանդէսը նախորդ տարիներէն տարբեր եւ փայլուն ընելու համար ո՛չ մէկ ջանք չէ գլացուած Կաջգաղի Մասնախումբին կողմէ : Երաժշտական կարող մը անակնկալներ վերապահուած են հանդիսատեսներուն : Նուագահանդէսէն անմիջապէս վերջ , սիրուն կատակերգութիւն մըն ալ պիտի ներկայացուի մէկ քանի բարիչեան ծանօթ դերասաններու կողմէ որոնք այս միջոցիս Պոլիս կը գտնուին պատահաբար :

Չմտնանք ըսել թէ հանդէսին attrait պիտի ըլլայ ապահովապէս գեղարուեստական առարկաներու այն գեղեցիկ եւ մեծարժէք հաւաքածոն զոր իշխան դեսպանը իր հետ բերած է եւ անով կատարեալ muséum մը վերածած դեսպանատունը : Ներկաները պիտի հրաւիրուին այդ գիշեր բայաառաբար այցելել այդ expositionը որ մաքի կատարեալ ժամանց մը կրնայ նկատուիլ :

90 % Շ Ա Ն

ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ԱՐԾՈՒԹԵՂԻՆԱՅ Վ.Ա.ՃԱՌ.ՍՏՈՒՆ. — Արիստան Մ. Պարսիկապետեան Ոսկերչական Վաճառատունը (Պոլիս Ոսկերչաց Ծուկայ , թիւ 13) որ երկար տարիներէ ի վեր կը գործէ ճշգուծեամբ եւ յաջողութեամբ , եւ որուն գործածած սոկին ապամանկները առաջին տեսակէ ըլլալէ զատ արհեստագիտական պատրաստութիւնն ալ իրատ ճաշակաւոր է , եւ այս տեսակէ աները միշտ գոճ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները , այս անգամ բոլորովին նոր դրութիւն մը հնարած է , — յոյժ զիւրամտալից գիներով իր 10 զանազան պարանքները , ի հարկին , 100ին ծաղկով ետ առնել յաճախորդէն եւ զրամը վճարել : Կ'արժէ այցելել թիւ 13-էն ալ Վաճառատունը , եւ այլքէ անցընել անոսոսկերչական ցուցադրութիւնները , այս կարգի որ եւ է գնում ընելէ առաջ :

Արսոնաւեի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԷՆՈՍԵԱՆ  
Կ. Պոլիս , Ֆինճանըլար եօզուշու , թիւ 27



**ՕԳՏՈՒԵՑԷՔ ԻՐԱԿԱՆ ԱՌԻԹԷՆ**

Ղալաթիա-Վոյլոտա փողոց թիւ 85, Մ.  
Տէր Դաւթեան շապիկի վաճառատունը նոր  
եղանակի առթիւ կարեւոր ապսպրանքներ  
տուած ըլլալով որոշած է այժմու մթերքը  
100ին 25 իրական զեղչով ծախել, Ուստի  
կը հրաւիրուի յարգոյ հասարակութիւնը որ  
օգտուի այս էական ճշգրիտ լիքիտաստիոնէն,  
որ մէկ ամիս պիտի տեւէ: Լիքիտաստիոնի  
ապրանքներն են շապիկ, օձիք, թեւոց,  
փողկապ, գուլպայ, թաշկինակ, կոճակ,  
եւն: Տէր Դաւթեան վաճառատունը իր ծա-  
խած ապրանքներուն տոկոճուածեամբ ու  
ճաշակովը արդէն հանրածանօթ ըլլալով, կը  
յանձնարարենք որ մեր ընթերցողները օգ-  
տուին այս իրական առիթէն:

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏՈՔԹ, Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Ե.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

**Ա Ր Ի Ս ԵՒ ԸՆԿ**


ՇՈԳԵՇՍՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

**ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ**

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Վաճառակի



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենա-  
ներով օժտեալ եւ եւրօպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամե-  
նանորր հասեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ:  
Տեսակի աղնութեան մասին եւրօպական ամենամեծ գործարաններու ապրա-  
նայ գէժ մրցելու առաւելութեան կը միացնէ զիններու գերազանց աժանութիւնը:  
Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի:  
Եւ նաքանակ գնում ընել ազգայնեքը կրնան զխել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔ  
ԵՒ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔ վաճառատունները, իսկ գաւառներու եւ օտար երկիր-  
ներու մէջ զիմեղ գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու  
ցուցադրութիւն մը՝ պէտք եղած լալոր տեղեկութիւններով:

- ԲԱՐԻՉ. — Պ. Լաքառիւն, Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքոտեօն:
- ՊՄՊԱՑ. — Պ. Ապրար եւ Ընկ.
- ԱՂԵՔԱՆԵՐԻԱ. — Պ. Մ. Գալփաեան
- ԳԱՀԻԷ. — Պ. Զ. Ռոզաբալ.
- ՌՈՒՄՃՈՒԳ. — Պ. Գ. Կ. Ինճիճեան որդիք.
- ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի.
- ԻՉՄԻՏ. — Պ. Յակոբ Մոմճեան
- ԶՄԻՌՆԻԱ. — Պ. Հայրիսի Վառնիկ.
- ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիեօ Ֆերնանտեզ.
- ԻԻՍԿԻԻԳ. — Պ. Մ. Բալուանօ.
- ՊԷՅՐՈՒԹ. — Պ. Ֆրանքել Շիֆֆներ.
- ՍԱՄՍՈՆ. — Պ. Գ. Պետրոսեան Եղբարք.
- ՏՐԱՊԻՉՈՆ. — Պ. Արիս Կ. Ինճիճեան.
- ՍԵՐԱՍՏԻԱ. — Պ. Գ. Վ. Ս. Մեծաուրբեան
- ՌՈՏՍՈՒՐ. — Պ. Յակոբ Բոօլաուալ

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ  
**ԱՌՉԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ**  
**ՀԱՅԵՐԷՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ**

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն հազարաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուը ամենէն զօրաւոր տպացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս Ֆրանսերէն լեզուն ուսանողներուն համար պատրաստուած ըլլալով հանգերձ՝ պիտանի եւ օգտակար է առնասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ, թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանր կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր քաղաքով կազմի 25 դր.

Գին ընտիր լարակազմի 27 դր.

Կեդրոնակետիկն է

Յ. ՄԱՏՔԷՈՍԵԱՆ վանառասունը, Ֆիննանքըլար Եօզուու, Կ. Պոլիս

**Ի Ի Ն Ի Օ Ն**

ՀՐԳԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ <i>փասք</i>	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ <i>փասք</i>	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքիօն»ի ապահովագրելոց կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպասատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Եանաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքիօնի ապահովագրութեան **ՉԵՐՄ** են այն վիսաներէն եւ յուսալաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահեսպուրուն խան, Օսմ. Պանֆային գիմացք

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ